ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

(1884-1915)



ԱՆԴԱՍՏԱՆ

Արևելյան կողմն աշխարհի
Խաղաղություն թող ըլլա...
Ո՛չ արյուններ, քրտինք հոսին
Լայն երակին մեջ ակոսին,
Ու երբ հնչե կոչնակն ամեն գյուղակի՝
Օրհներգություն թող ըլլա:
Արևմտյան կողմն աշխարհի
Բերրիություն թող ըլլա...

Ամեն աստղե ցող կայլակի,
Ու ամեն հասկ ձուլե ոսկի.
Եվ ոչխարներն երբ սարին վրա արածին՝
Ծիլ ու ծաղիկ թող ըլլա:

Հյուսիսային կողմն աշխարհի
Առատություն թող ըլլա...
Ոսկի ծովուն մեջ ցորյանին
Հավետ լողա թող գերանդին.

Ու լայն ամբարն աղուններուն երբ բացվի՝
Բերկրությո՛ւն թող ըլլա:
Հարավային կողմն աշխարհի
Պտղաբերում թող ըլլա...

Ծաղկի՛ մեղրը փեթակներուն,
Հորդի գինին բաժակներուն.
Ու երբ թխեն հարսերը հացը բարի՝
Սիրերգությո՛ւն թող ըլլա:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բանաստեղծության մեջ ցո՛ւյց տուր այն տողերը, որոնցից երևում է, որ բանաստեղծն աշխարհին խաղաղություն է մաղթում:
2. Դո՛ւրս գրիր այն տողերը, որտեղ երևում է, որ բարեկեցություն է մաղթում:
3. Գտի՛ր այն տողերը, որտեղ սեր է մաղթում:
4. Գտիր այն բառերը, որոնք գույն են հուշում. ո՞ր գույներն են երևում Վարուժանի «Անդաստանում»:
5. Վերը նշված առաջադրանքների հիման վրա էսսե՛ գրիր «Անդաստան» բանաստեղծության շուրջ:
6. Մեկնաբանի՛ր Դանիել Վարուժանի «Անդաստան» բանաստեղծության մարդասիրական բնույթը:
7. Ինչո՞ւ է բանաստեղծության մեջ հեղինակը օրհնում աշխարհի չորս կողմերը: Հիմնավորի՛ր:
8. Ի՞նչ գիտես անդաստանի եկեղեցական արարողության մասին: Ներկայացրո՛ւ այդ խորհուրդը:
9. Համացանցում տեղեկություններ գտիր եկեղեցական Անդաստան արարողության մասին:
10. Զուգահեռներ անցկացրու Վարուժանի բանաստեղծական տողերի և եկեղեցում կատարվող հոգևոր բարեպաշտական արարողություններից մեկի՝ անդաստանի միջև: Գտի՛ր ընդհանրություններ և տարբերություններ:

ա. Արևելեան կողմն աշխարհի խաղաղութիւն թող ըլլայ...
Արևմտեան կողմն աշխարհի բերրիութիւն թող ըլլայ...
Հարաւային կողմն աշխարհի պըտղաբերում թող ըլլայ...
Հիւսիսային կողն աշխարհի առատութիւն թող ըլլայ...

բ. Օրհնեսցի և պահպանեսցի և նախախնամեալ պահեսցի արևելեան կողմն աշխարհիս և Հայրապետութիւն Հայոց.

Օրհնեսցի և պահպանեսցի և նախախնամեալ պահեսցի արևմտեան կողմն աշխարհիս և թագաւորութիւնք քրիստոնէից.

Օրհնեսցի և պահպանեսցի և նախախնամեալ պահեսցի հարաւային կողմն աշխարհիս երկիրս, անդաստանս և պտղաբերութիւն տարւոյս.

Օրհնեսցի և պահպանեսցի և նախախնամեալ պահեսցի հիւսիսային կողմն աշխարհիս վանքս, անապատս, քաղաքս և գիւղս և բնակեալ ժողովուրդս ի նոսա:

Դանիել Վարուժանի «Անդաստան» բանաստեղծությունը մարդասիրական բնույթ ունի, այն վեր է ազգային-հայրենասիրական խորհրդից և ունի համամարդկային բնույթ: Բանաստեղծության մեջ հեղինակն իր հզոր խոսքի ուժով օրհնում է աշխարհի չորս կողմերը, ինչպես դա անում էին հնում եկեղեցականները:

Վարուժանը «Անդաստան» բանաստեղծության մեջ շատ է օգտագործում կարմիրը, կապույտը, կանաչը, սպիտակը, ծիրանագույնը: Այդ գույները խորհրդանշում են՝ երկինք, գինի, բնություն, խաղաղություն և այլն... Ողջ բանաստեղծությունը, սկզբից մինչև վերջ, պարուրված է բարեմաղթանքներով: Բացատրական բառարանում անդաստան բառը բացատրվում է դաշտ, արտ, հանդ, նաև՝ որպես դաշտերի օրհնություն: